ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ՝ ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

09.03.2026

Սիրելի՛ կանայք, մայրեր, քույրեր և դուստրեր

Գարնանային այս լուսավոր տոնը՝ Մարտի 8-ը, լավագույն առիթն է ևս մեկ անգամ արժևորելու ձեր անփոխարինելի ներկայությունը մեր կյանքում և արտահայտելու մեր ջերմ երախտագիտությունն ու հարգանքը:
Սրտանց շնորհավորում եմ բոլորիդ՝ ձեր քնքշությունն ու հմայքը խորհրդանշող այս գեղեցիկ օրվա՝ Կանանց տոնի առթիվ:
Դուք, հիրավի, մեր ավանդույթների պահապանն եք, ազգային ինքնության ամուր հենասյունը:
Ձեր անսպառ հոգատարությամբ են ամրանում ընտանիքը, արժանապատիվ դաստիարակություն ստանում երեխաները և նաև՝ ամրանում պետությունը: Օժտված լինելով բազմաթիվ դերեր հեշտությամբ համատեղելու զարմանալի ունակությամբ՝ անգնահատելի ավանդ ունեք մեր մարզի ու երկրի զարգացման գործում: Ձեր եռանդի ու հոգատար վերաբերմունքի շնորհիվ հաջողությամբ գործում եք առողջապահության, կրթության, մշակույթի, գիտության, գործարարության, քաղաքականության, պետական ծառայության և հանրային կյանքի այլ ոլորտներում:
Դուք այն ուժն եք, որը դժվարագույն պահերին անգամ չի ընկրկում, որը ստեղծում է խաղաղության ու կյանքի շարունակականության այն միջավայրը, առանց որի անհնար է պատկերացնել մեր մարզի առաջընթացը:
Իսկ մեր հանձնառությունն է շարունակել ստեղծել այնպիսի պայմաններ, որտեղ կինը կկարողանա լիովին դրսևորել իր մասնագիտական ներուժը, որտեղ պաշտպանված կլինեն նրա իրավունքները, լսելի կլինի ձայնը, և անխախտ կմնա ընտանիքի անվտանգությունը:
Սիրելի՛ կանայք, թո՛ղ բնության զարթոնքն ու գարնան շունչը միշտ ուղեկցեն ձեզ:
Մաղթում եմ բոլորիդ առողջություն, մասնագիտական վերելքներ, ստեղծագործ ուժ, անսպառ երջանկություն և խաղաղություն: Թո՛ղ գարունը ողջ տարվա ընթացքում ծաղկի ձեր հոգիներում և ջերմություն սփռի ձեր շուրջը:
Եղե՛ք սիրված, գնահատված և երջանիկ: